Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ

Ի պատասխան № **UG-22 «ՀՀ Տավուշի մարզի Կողբ համայնքի ջրամատակարարման պոմպակայանը սնուցող ենթակայանի վերազինում և համայնքի սեփական կարիքների համար արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղադրում»** մրցույթի վերաբերյալ 03.08.2020թ. ժամը 11:24 էլեկտրոնային փոստի միջոցով ստացված հարցումների՝ ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց 1՝ Պիտանելիության չափորոշիչ ի մեջ Հայտատուի մասին տեղեկատվության ձևում, եթե մասնակիցը ոչ պետական կազմակերպություն է, նույնպե՞ս պետք է ներկայացնի կազմակերպության կառուցվածքը, Տնօրենների խորհրդի ցանկը և բենեֆիցիար սեփականության մասին փաստաթուղթ:
Պատասխան՝ Հարգելի գործընկեր, համաձայն մրցութային փաթեթի մասնակիցը պետք է ներկայացնի կազմակերպության կառուցվածքը, տնօրենների խորհրդի ցանկը և բենեֆիցիար սեփականության մասին փաստաթուղթը:

Հարց 2՝ Ըստ ՑՀ 16.4 կետի.
Հայտատուն պետք է նաև ներկայացնի ցուցակ, որտեղ նշվում են մանրամասնություններ, այդ թվում պահեստամասերի, հատուկ գործիքների և այլնի գնման առկա աղբյուրները և ընթացիկ գները, որն անհրաժեշտ է ապրանքների՝ Գնորդի կողմից ապրանքների՝ Հայտաթերթում նշված կիրառման մեկնարկից սկսած ժամանակահատվածում պատշաճ և շարունակական գործարկման համար:
կխնդրեմ պարզաբանում տալ ցուցակի մասով, մի՞թե չի ներկայացվելու միայն տեխ. բնութագրի մեջ նշված ապրանքների մասով տեղոկատվություն՝ ՑՀ և Հայտաթերթում սահմանված ձևով:
Պատասխան՝ Սույն մրցույթի մասով անհրաժեշտ է ներկայացնել Մրցույթային փաստաթղթերի Բաժին VII Մաս 2 «Տեխնիկական մասնագրեր» բաժնով պահանջվող փաստաթղթերը:

Հարց 3՝ Ի՞նչ լիցենզիաներ են անհրաժեշտ Լոտ 2-ի մասնակցության համար:
Պատասխան՝ Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 6-րդ մասի «Մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը արևային էներգիայի կիրառմամբ ինքնավար էներգաարտադրողների տեղակայանքների դրվածքային հզորությունը կարող է հասնել էլեկտրական էներգիայի իրենց սպառիչների տեղակայված ընդհանուր հզորությանը, բայց ոչ ավելի, քան 500 կիլովատ, որոնց գործունեությունը ենթակա չէ կարգավորման կառուցման և արտադրության ժամանակահատվածներում», հետևաբար Լոտ 2 «ՀՀ Տավուշի մարզի Կողբ համայնքում 150 կվտ հզորությամբ՝ թվով 1 արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղադրում» աշխատանքների իրականացման համար լիցենզիա չի պահանջվում:

Հարց 4՝ Կխնդրեմ տրամադրել Լոտ 2-ի համար սահմանված ֆինասնավորման չափը:
Պատասխան՝ Հարգելի գործընկեր, համաձայն ՀԲ «Ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման» ուղեցույցի ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների նախահաշվային գները հրապարակման ենթակա չեն:

Հարգանքով՝

Ռոզա Դանիելյան
ՀՏԶՀ

06 օգոստոսի 2020թ.